ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

ի պատասխան Ձեր 30.04.2025թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան քաղաքի Թումանյան-Փարպեցու փողոցների, Պուշկինի փողոց – Մ. Մաշտոցի պողոտա խաչմերուկի և Մ. Մաշտոցի պողոտայի վրա գտնվող ծաղիկների բացօթյա վաճառքի կետերում գործունեություն իրականացնող տնտեսվարողները շատ տարիներ առաջ դիմումներ են ներկայացրել՝ նշված հասցեներում տակդիրներ տեղադրելու խնդրանքով: Դիմումները քննարկվել են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առևտրի, ծառայությունների և գովազդի վարչության և Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կողմից և ստանալով դրական եզրակացություն՝ տակդիրները տեղադրվել են (ժամկետներ չեն նշվել):

Ներկայումս թույլտվությունները տրամադրվում են dimum.yerevan.am առցանց հարթակով, Երևան քաղաքի ավագանու 23.09.2022թ. թիվ 632-Ն որոշման հավելվածի պահանջների համաձայն (տարածքի լուսանկար, Երևան համայնքի նկատմամբ պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկանքներ և տեղական տուրքի վճարման անդորրագիր), դիմում ներկայացնելու դեպքում: Այլ իրավական հիմքեր առկա չեն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ